Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ՏԴ3/0277/02/14 քաղաքացիական գործով 13.02.2026 թվականին կայացված որոշման վերաբերյալ

24.02.2026 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան), քննելով ըստ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ի հայցի ընդդեմ «ԴԱՎԻԹ ԵՎ ՍՅՈՒԶԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ու Էդվարդ Աղասյանի՝ ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականությունից ազատ լինելու իրավունքը ճանաչելու պահանջի մասին, և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2023 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ 2026 թվականի փետրվարի 13-ին որոշել է Ընկերության վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.06.2022 թվականի վճռին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ա. Աթաբեկյանս և Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, Վճռաբեկ դատարանում՝ քաղաքացիական պալատի (...) դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գործի կոլեգիալ քննության ժամանակ դատավորն իրավունք չունի ձեռնպահ մնալու քվեարկելուց:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ մեծամասնության կարծիքին չհամաձայնվող դատավորի հատուկ կարծիք ունենալու մասին նրա ստորագրությամբ նշում է կատարվում դատական ակտում: (...):

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հատուկ կարծիքը կարող է վերաբերել դատական ակտի ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասին:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հրապարակումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Սույն գործով հայտնվող հատուկ կարծիքը վերաբերում է Վճռաբեկ դատարանի 13.02.2026 թվականի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերին՝ հետևյալ հիմնավորումներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նշելով, որ «*Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 999-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը*»:

Դրանից ելնելով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններին՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանցում նշվածները կարող էին բավարար հիմք հանդիսանալ բողոքի քննության արդյունքներով նման եզրահանգման գալու համար:

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են դատական ակտը բեկանելիս կամ օրինական ուժի մեջ թողնելիս այն շարժառիթները, որոնցով Վճռաբեկ դատարանը չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը որպես Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու շարժառիթ, ըստ էության, նշել է, որ «*սույն գործով 26.05.2014 թվականի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SF 217922 վկայագրի 14-րդ կետում որպես ապահովագրության պայմաններ վկայակոչված են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականին հաստատված՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները, ինչը նշանակում է, որ կողմերը, ելնելով պայմանագրի ազատության սկզբունքից, սահմանել են, որ միայն նշված կանոններն են կիրառելի ապահովագրության գործընթացում: «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու մասին դիմումի մերժման հիմքում դրվել է նաև «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի թիվ RL 1-017 կանոնները, որոնք ընդունվել են 17.12.2010 թվականին, այսինքն՝ ապահովագրական վկայագրում վկայակոչված ներքին իրավական ակտի հաստատումից շուրջ երեք ամիս հետո, հետևաբար դրանք ապահովագրական վկայագրում ուղղակի վկայակոչված չլինելու պայմաններում, չէին կարող կիրառելի լինել, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 999-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումը: Սույն դեպքում «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի թիվ RL 1-017 կանոնները կիրառելի չլինելու մասին Դատարանի հետևությունները Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում այն պատճառաբանությամբ, որ թիվ SF 217922 վկայագրի 14-րդ կետում որպես*

ապահովագրության պայմաններ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի թիվ RL 1-017 կանոններն ուղղակիորեն վկայակոչված չեն, հետևաբար՝ կողմերն ուղղակիորեն բացառել են ապահովագրական գործընթացում նշված կանոնների կիրառման իրավական հնարավորությունը:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 999-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, թե՛ այն իրողությունը, որ սույն դեպքում կողմերի միջև կնքված ապահովագրության պայմանագրի բովանդակությունը կազմող պայմանները որևէ հողում չեն պարունակել ապահովագրական գործընթացում «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի թիվ RL 1-017 կանոնների կիրառման՝ կողմերի համաձայնեցված կամքին, հետևաբար՝ ապահովագրության ընդհանուր պայմաններում պարունակվող, սակայն ապահովագրության պայմանագրի մեջ չընդգրկված պայմանները չեն կարող պայմանագրով չնախատեսված իրավունքներ և պարտականություններ առաջացնել»:

Կարծում ենք, որ վերը նշվածը չէր կարող բավարար հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի 04.08.2023 թվականի որոշումը բեկանելու և Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.06.2022 թվականի վճռին օրինական ուժ տալու համար հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենքով, «Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով, Բյուրոյի կանոններով և իրավական այլ ակտերով:

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի 13.09.2010 թվականի թիվ RL1-001 կանոնների 1.1-րդ կետի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության Պայմանները (այսուհետ նաև՝ Պայմաններ) ԱՊՊԱ վկայագրի (այսուհետ նաև՝ Վկայագիր) հետ ԱՊՊԱ պայմանագրի անբաժանելի մասերն են:

Նույն կանոնների 7.1-րդ կետի համաձայն՝ Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր են ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով), որոնց շուրջօրյա հասանելիությունը (ներառյալ ոչ աշխատանքային օրերին) և հեռախոսազրույցի ձայնագրումը Ապահովագրողը պարտավորվում է ապահովել:

Նույն կանոնի 7.3-րդ կետի համաձայն՝ Պայմանների 7.1-րդ կետի համաձայն Ապահովագրողին զանգահարելու դեպքում Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պետք է հայտնի ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը, որը պետք է առնվազն պարունակի՝

ա) Վկայագրի համարը,

բ) տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

V ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը,

V ապահովագրական պատահարի վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը),

V ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը),

V ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում),

գ) տեղեկատվություն Պայմանների 7.5-րդ կետում նշված համաձայնեցված հայտարարագիր կազմելու մասին համաձայնության առկայության կամ դրա բացակայության վերաբերյալ:

Նույն կանոնների 7.8-րդ և 7.8.1-րդ կետերի համաձայն՝ ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) Պայմանների 7.1-րդ և 7.3-րդ կետերում նշված գործողությունները ձեռնարկելուց բացի, պարտավոր է նաև՝

ա) ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: (...),

բ) չլքել ապահովագրական պատահարի վայրը և չտեղաշարժել ավտոտրանսպորտային միջոցը կամ ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

V տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունը ապահովելու և (կամ) օրենքի պահանջները կատարելու նկատառումներով,

V տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով,

V Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս Պայմաններում նշված ժամկետում չի ժամանել պատահարի վայր կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետագա ցուցումներ է տվել Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) և տուժողին (տուժողներին),

գ) **համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,**

(...):

Նույն կանոնների 7.9-րդ և 7.9.1-րդ կետերի համաձայն՝ համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում՝

Պայմանների 7.1-րդ և 7.3-րդ կետերում նշված գործողություններից բացի Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պարտավոր է՝

ա) մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի հետ կազմել Պայմաններով նախատեսված և սահմանված կարգի համաձայնեցված հայտարարագիր,

բ) ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին տրված ցուցումներին (եթե նման ցուցումներ տրվել են): Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Պայմաններով սահմանված համաձայնեցված հայտարարագրի միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը:

գ) մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ Ապահովագրողի եզրակացության վերաբերյալ իր և (կամ) ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով և հրահանգով: Նման դեպքերում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքները սկսելուց առնվազն մեկ օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին) (հնարավորության առկայության դեպքում)

դ) տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու մասին և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր, ե) ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի զննումն անցկացնելու հնարավորություն, զ) ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձին տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն կետի «ա», «գ», «ե» և «է» ենթակետերով սահմանված պահանջները,

է) **համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին:**

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի 17.12.2010 թվականի թիվ RL 1-017 կանոնների կանոնների 4-րդ կետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը տուժողի (նրա իրավահաջորդի) կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելու օրը վերջինիս տրամադրում է ապահովագրական հատուցում ստանալու համար ԱՊՊԱ պայմանագրի պայմաններով սահմանված այն փաստաթղթերի ցանկը, որոնք դեռևս տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից չեն ներկայացվել: Ընդ որում, **ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների կողմից տվյալ պատահարի գծով վարչական վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու դեպքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած համապատասխան արձանագրության (եզրակացության) հետ պետք է ներկայացվեն նաև ճանապարհային երթևեկության անվտանգության համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից կազմված ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների համաձայնությունը վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու մասին,** ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարի սխեման, ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների բացատրությունները պատահարի վերաբերյալ և ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր մասնակիցների ու պատահարին մասնակցած ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած բոլոր ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների կողմից պատահարի վայրում համատեղ ստորագրած (նշում՝ պատահարի վայր չժամանած կամ ստորագրելուց հրաժարված ապահովագրական ընկերության ներկայացուցչի վերաբերյալ) պատահարի հանգամանքների վերաբերյալ համաձայնության ակտը (համաձայն Ձև 1-ի): Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերության (ընկերությունների) ներկայացուցչի չներկայանալու, ինչպես նաև պատահարի վայր չժամանելու մասին հեռախոսով հայտնելու կամ ստորագրելուց հրաժարվելու դեպքում սույն կետով նախատեսված ակտի «ստորագրություններ» դաշտում նշում է կատարվում այդ մասին, և համարվում է, որ ապահովագրական ընկերության (ընկերությունների) ներկայացուցիչը ակտում նշված տեղեկատվության վերաբերյալ տվել է իր համաձայնությունը, բացառությամբ, եթե ապահովագրական ընկերության (ընկերությունների) հաղորդման հիման վրա տվյալ պատահարում խարդախության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, և գործով վարույթը չի կարճվել (քրեական հետապնդումը չի դադարեցվել, արդարացման դատավճիռ չի կայացվել) անձի արարքում խարդախության հանցակազմի բացակայության հիմքով: (4-րդ կետը փոփ. է 29/05/2014թ թիվ 19-Լ):

Նույն կանոնների 5-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը համարվում է ստացված ԱՊՊԱ պայմանագրի պայմանների համաձայն՝ տվյալ տեսակի վնասի հատուցման համար ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով ապահովագրողի կողմից ստացվելու պահին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իրավախախտումներով վարչական վարույթ իրականացվում է պատահարի մասնակցի՝ պատահարի վայրում ներկայացված գրավոր պահանջով կամ նախաքննության կամ հետաքննության մարմնի որոշմամբ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատահարի մասնակիցների կողմից նույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված պահանջի բացակայությունը փաստվում է գրավոր համաձայնությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SF 217922 վկայագրով ապահովագրվել է «PORSCHE CAYENNE» մակնիշի ********[1] հաշվառման համարանիշով ավտոմեքենայի շահագործումից բխող պատասխանատվության ռիսկը: Նշված վկայագրի՝ «Ապահովագրության պայմաններ» վերտառությամբ 14-րդ կետում վկայակոչված են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թվականին հաստատված՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները:

24.08.2014 թվականին Արզնի քաղաքում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար՝ «PORSCHE CAYENNE» մակնիշի ********[2] պետհամարանիշով և «LEXUS ES 350» մակնիշի ********[3] պետհամարանիշով ավտոմեքենաների մասնակցությամբ:

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲ ընկերության գործադիր տնօրենի 16.09.2014 թվականի ապահովագրական հատուցման տրամադրման մերժման վերաբերյալ որոշմամբ 08.09.2014 թվականի «Դավիթ և Սյուզի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Դավթյանի կողմից ներկայացված ապահովագրական վնասի վերաբերյալ հայցային դիմումը մերժվել է երկու հիմքով՝

1) ապահովագրական ընկերության ներկայացուցիչները պահանջել են պատահարի մասնակից վարորդներին, որպեսզի իրականացվի գործի քննություն՝ վարչական վարույթ, սակայն վթարի մասնակիցները հրաժարվել են վարչական վարույթից՝ խախտելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի RL 1-001 կանոնների 7.8.1-րդ կետի «գ» ենթակետը, ինչն ապահովագրական հատուցման մերժման հիմք է,

2) «Դավիթ և Սյուզի» ՍՊ ընկերության կողմից չի ներկայացվել ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր մասնակիցների ու պատահարին մասնակցած տրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած բոլոր ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների կողմից պատահարի վայրում համատեղ ստորագրած պատահարի հանգամանքների վերաբերյալ համաձայնության ակտը:

Համադրելով սույն գործի փաստերը և վերը նշված իրավական նորմերը՝ գտնում ենք, որ այն դեպքում, երբ տուժողի կողմից հատուցում ստանալու համար ապահովագրական ընկերությանը չի ներկայացվում ճանապարհային ոստիկանության կողմից իրականացված վարչական վարույթի հիման վրա կազմված եզրակացությունը, ապա դրա փոխարեն պետք է պարտադիր կերպով ներկայացվի ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր մասնակիցների ու պատահարին մասնակցած ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած բոլոր ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների կողմից պատահարի վայրում համատեղ ստորագրած (նշում՝ պատահարի վայր չժամանած ապահովագրական ընկերության ներկայացուցչի վերաբերյալ) պատահարի հանգամանքների վերաբերյալ համաձայնության ակտը:

Հատուցման վճարումը կարող է մերժվել, եթե տուժողը կամ նրա իրավահաջորդը եռամսյա ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը, կամ

---

[1] Առկա է անձնական տվյալ

[2] Առկա է անձնական տվյալ

[3] Առկա է անձնական տվյալ

ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ինչպես նաև, եթե այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի: Ապահովագրական ընկերությունը միայն համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում է իրավասու ապահովագրական հատուցման վարույթ իրականացնել: Այսինքն, այն դեպքում, երբ պատահարի տուժողը, չնայած ապահովագրական ընկերության կողմից իրեն ներկայացված վարչական վարույթ իրականացնելու պահանջին, **հրաժարվել է վարչական վարույթի իրականացումից**, ապա հատուցում ստանալու համար **պարտավոր է ապահովագրական ընկերությանը ներկայացնել** ի թիվս այլ փաստաթղթերի նաև **ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր մասնակիցների ու պատահարին մասնակցած ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած բոլոր ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների կողմից պատահարի վայրում համատեղ ստորագրած (նշում՝ պատահարի վայր չժամանած ապահովագրական ընկերության ներկայացուցչի վերաբերյալ) մեղավորության վերաբերյալ համաձայնության ակտը:**

Սույն գործով վթարի վարորդներն ընտրել են ինքնուրույն կարգավորման գործընթացը: Նշվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ 25.08.2014 թվականի բացատրություններով Աղասյան Էդվարդը հայտնել է, որ ընդունում է իր մեղավորությունը և հրաժարվում վարչական վարույթից, իսկ Ասատրյան Արթուրը հայտնել է, որ մյուս մեքենայի վարորդն ընդունել է իր մեղավորությունը, ինքը ևս հրաժարվում է վարչական վարույթից: Այսինքն՝ պատահարի վերաբերյալ վարչական վարույթ չի իրականացվել, քանի որ կողմերը հրաժարվել են վարչական վարույթից, որից հետո չի ստորագրվել նաև ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր մասնակիցների ու պատահարին մասնակցած ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած բոլոր ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների կողմից պատահարի վայրում համատեղ ստորագրած մեղավորության վերաբերյալ համաձայնության ակտը:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ 16.09.2014 թվականի ապահովագրական **հատուցումը մերժվել է ոչ միայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի 17.12.2010 թվականի թիվ RL 1-017 կանոններով ղեկավարվելու արդյունքում, այլ նաև «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի 13.09.2010 թվականի թիվ RL 1-001 կանոններով**: Հետևաբար ապահովագրական հատուցումը մերժելիս «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի 17.12.2010 թվականի թիվ RL 1-017 կանոնները վկայակոչելը նշված որոշումը ոչ իրավաչափ չի դարձնում, ինչպիսի սխալ եզրահանգման եկել է Դատարանը:

Վերոգրյալի հիման վրա հայտնում ենք մեր անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Դատավորներ՝ **Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ**

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ